«ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	«ԹՎԱԿԱՆԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ 7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ»
ԱՌԱՐԿԱ	«ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ»
ՀԵՂԻՆԱԿ	ԼԱՐԻՍԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՄԱՐԶ	ԵՐԵՎԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Հ. 167 հիմնական դպրոց

Բովանդակություն

1. Ներածություն ----------3
2. Թվական անուն----------4
3. Թվականի դասավանդման առանձնահատկությունները----------7
4. Օրվա դասի պլանավորման նմուշ-օրինակ----------12
5. Եզրակացություն ----------14
6. Օգտագործված գրականության ցանկ ----------15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկայի առարկան հայերենի հնչյունաբանության , ուղղագրության-ուղղախոսության,կետադրության, բառագիտության, քերականության և ոճական հնարքների ուսուցման ձևերն են: Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկան ունի իր խնդիրները.

1. Որոշում է դպրոցում լեզվի դասընթացի բովանդակությունն ու ծավալը, առանձնահատկություններն ու նպատակները, նրա կառուցվածքը, համակարգայնությունը, մասերի հետևողականությունը, ուսումնական նյութի բաշխումն ըստ դասարանների:
2. Կատարում է արդյունավետ մեթոդների ընտրություն և նկարագրություն՝ հաշվի առնելով ուժերի ու ժամանակի տնտեսումը:
3. Ուսումնասիրում է այն պայմանները, որոնցում աշակերտները գիտելիքներ են ձեռք բերում:

Լեզվի մեթոդիկայի հիմքում ընկած են հոգեբանության մի շարք սկզբունքներ, օրինակ՝ աշակերտի տարիքային առանձնահատկությունները, բնավորության գծերը և այլն:

Լեզվի դասավանդման մեթոդները կարող են դասակարգվել ըստ աշակերտների գիտելիքների աղբյուրի, ըստ աշխատանքի բնույթի և կատարման տեղի: Մեթոդները կարող են տարբերվել նաև հոգեբանական հիմունքով՝ նայած թե աշակերտի որ ունակությունն է զարգացվում:Վերջապես, մեթոդները կարող են տարբերվել ըստ այն բանի, թե դատողության ինչ միջոցներ են դրվում ուսուցման հիմքում:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման տեմպը, ուսուցման ժամանակակից մեթոդները, սովորողների անընդհատ ինքնակրթության զարգացման անհրաժեշտությունը պարտադրում է ուսուցման գործընթացում կիրառել այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք բարձրացնում են կրթության արդյունավետությունը և որակը, ապահովում են ինքնուրույն ճանաչողական գործունեության շարժառիթներ, նպաստում են միջառարկայական կապերի ամրապնդմանը՝ տեղեկատվական տեխնոլոգիաների և առարկայական ծրագրերի ինտեգրման եղանակով: Այս պահանջներին բավարարում է տարբեր մեթոդների կիրառումը:

Ըստ գիտելիքներ ստանալու աղբյուրի՝ մեթոդներ են համարվում ուսուցչի խոսքը, զրույցը, լեզվական նյութի վերլուծությունը, վարժությունները, զննական պարագաների օգտագործումը, աշխատանքը դասագրքով, էքսկուրսիաները: Սրանք են հենց այն աղբյուրները, որոնցից աշակերտը գիտելիքներ է ստանում:

ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Առարկաների թիվ կամ թվային կարգ նշանակող բառերը կոչվում են թվական կամ թվական անուն:

Օրինակ՝ մեկ, հինգ, տասնվեց, հարյուր քսան, մեկ երրորդ, իններորդ, վեցական, չորս-չորս և այլն:

Պատասխանում է քանի՞, որքա՞ն, որչա՞փ, ինչքա՞ն, ինչչա՞փ, ո՞րերորդ, քանի՞երորդ հարցերին:

Ըստ իմաստի թվականները բաժանվում են երեք խմբի.

1. Քանակական թվականներ. նշանակում են թիվ կամ առարկաների որոշակի քանակ՝ երկու, հինգ, վաթսուներեք, հինգ յոթերորդ:
2. Դասական թվականներ. նշանակում են առարկայի թվային կարգ՝ առաջին, երրորդ, քառասուներորդ:
3. Բաշխական թվականներ. նշանակում են առարկաների հավասար քանակական բաշխում՝ չորսական, ութ-ութ:

Քանակական թվականները լինում են երկու տեսակ՝

- Ամբողջ թվեր նշանակող թվականներ՝ մեկ հինգերորդ, հարյուր տասնչորս, ութսուներկու,
- Կոտորակային թվականներ՝ մեկ երրորդ, մեկ հարյուրերորդական, երեք ամբողջ յոթ տասնորդական:

Ամբողջ թիվ նշանակող քանակական թվականը խոսքիմասային հատուկ ձև չունի:

Թվականը քերականորեն չի ձևափոխվում: Միայն գոյականաբար գործածվելիս կարող է հոլովվել:

Թվականներն ըստ կազմության լինում են՝

- պարզ (արմատական)՝ զրո, մեկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, յոթ, ութ, ինը, տասը, քսան, հարյուր, հազար, միլիոն, միլիարդ, տրիլիոն:
- բաղադրյալ:

Բաղադրյալ թվականները լինում են՝

- ածանցավոր՝ առաջին, երկրորդ, յոթերորդ, երեսուն, իննսուն,չորսական,
- բարդ՝ տասնմեկ, չորս հարյուր քսանվեց,

- բարդ ածանցավոր՝ երեսունմեկ, իննսունինը, քսանհինգերորդ, երեք հինգերորդ,

Բարդ և բարդ ածանցավոր թվականները լինում են՝

- համադրական՝ տասնինը, քսաներկու, իննսունմեկ, հիսունվեցերորդ, քսանհինգական,
- հարադրական՝ հարյուր տասնմեկ, վաթսուներեք հազար, մեկ տասներորդ, զրո ամբողջ մեկ տասնորդական, տասներկու-տասներկու:

Մեկ թվականն ունի նաև մի տարբերակը, որը համանուն է մի անորոշ դերանվանը:

Թվականակերտ ածանցներ

Թվականներից այլ թվականներ կազմող ածանցները կոչվում են թվականակերտ ածանցներ:

Դրանք վերջածանցներ են՝ երկ-**որդ**, հինգ-**երորդ**, ութ-**սուն**, հնգ-**ական**:

-Որդ և - **երորդ** ածանցները քանակական թվականներից կազմում են դասական թվականներ, ինչպես նաև **քառորդ** կոտորակային թվականը: **-Որդ**-ը գործածվում է միայն **երկրորդ, երրորդ, չորրորդ, քառորդ** կազմություններում: **Քառ**-ը չորս արմատի հոմանիշն է:

Մեկ քանակական թվականից նշված ածանցներով դասական թվական չի կազմվում: Դրա փոխարեն գործածվում է **առաջին** բառը:

Մեկ, երկու, երեք, չորս թվականները բաղադրյալ թվականի վերջին բաղադրիչ լինելու դեպքում ստանում են –երորդ ածանցը՝ քսանմեկերորդ, երեսուներկուերորդ, իննսուներեքերորդ, հարյուրչորսերորդ:

-Սուն ածանցը միավոր նշանակող երեք, չորս, հինգ, վեց, յոթ, ութ, ինը պարզ թվականներից կազմում է տասնավոր նշանակող թվականներ՝ քառասուն, ութսուն, իննսուն: Երե-սուն, հի-սուն, վաթ-սուն, յոթան-ա-սուն կազմությունների դեպքում հիմքը համապատասխան արմատների անկանոն տարբերակներ են:

-**Ական** ածանցը քանակական թվականներից կազմում է բաշխական թվականներ՝ երեք**ական**, քսանմեկ**ական**:

Կա բաշխական թվականների կազմության մեկ այլ՝ հոմանիշ եղանակ՝ քանակական թվականի կրկնությամբ՝ երեք-երեք, տասնհինգ-տասնհինգ:

Թվականի ուղղագրությունը

Քանակական թվականները՝ **զրո**-ից մինչև **հարյուր**-ը, պարզ բառեր են կամ բաղադրյալ համադրական կազմություններ, **հարյուր մեկ**-ից սկսած՝ բաղադրյալ հարադրական

կազմություններ են (բացի **հազար**-ից, **միլիոն**-ից, **միլիարդ**-ից և այլն)՝ երկու հազար վեց հարյուր քառասունյոթ, մեկ միլիոն, մեկ միլիարդ, երեք տրիլիոնվեց հարյուր միլիարդչորս հարյուր քսան միլիոն յոթ հարյուր քսանհինգ հազար ինը հարյուր ութսունութ:

Ինը և **տասը** թվականները ունեն **ը** կամ **ն** վերջնահնչյուն, որը փորխանվանական կիրառության դեպքում կատարում է նաև որոշիչ հոդի դեր: Միայն **տասը** բառը երբեմն կարող է լինել **տաս** ձևով (Իննից **տաս** է պակաս):

Կոտորակային թվականները հարադրական կազմություններ են՝ չորս հինգերորդ, երեք հազարերորդ, մեկ ամբողջ հինգ տասնորդական: Բացառություն են քառորդ բառը՝ որպես մեկ քառորդ դասական թվականի հոմանիշ, և կես բառը՝ որպես մեկ երկրորդ դասական թվականի հոմանիշ, ինչպես նաև կես-ով մի շարք կազմություններ՝ մեկուկես , յոթուկես և այլն: Կոտորակային թվականի համարիչը ամբողջ թիվ նշանակող թվական է, իսկ հայտարարը՝ դասական թվական՝ ական ածանցով կամ առանց դրա:

Բաշխական թվականների կրկնավոր տարբերակները գրվում են միության գծիկով՝ յոթ-յոթ, քսանմեկ-քսանմեկ:

Դասական թվականը համադրական բաղադրություն է, եթե կազմված է պարզ, ածանցավոր, բարդ համադրական կամ երկբաղադրիչ հարադրական քանակական թվականներից:

Թվականը նախադասության մեջ կարող է լինել որոշիչ. ես ունեմ եկու քույր և մեկ եղբայր: Բաշխական թվականները կարող են լինել նաև չափ ու քանակի պարագա. խաղավարը խաղաթղթորը ութ-ութ բաժանեց մասնակիցներին:

Փոխանվանաբար կիրառվելիս թվականը կարող է գոյականի նման հոլովվել, հոգնակի դառնալ, որոշիչ հոդ ունենալ՝ ստանալ գոյականին բնորոշ պաշտոններ: (Երեքով կմասնակցեն մրցույթին: Նա ծնվել է մարտի քսանհինգին:)

Արաբական թվանշաններ գործածելու դեպքում հոդերը և վերջավորությունները գրվում են միության գծիկով՝ 3-ը, 4-դ, 5-ով, 8-ից, 9-երը:

Հոլովվելիս տասը թվականը կորցնում է ը վերջնահնչյունը՝ տասից, տասին, տասով, տասեր բառակազմության ժամանկ տասը բառի հիմքը մերթ պահպանում է ն-ն՝ տասներկու, տասնութ, մերթ կորցնում է՝ տասանոց, տասական:

Ինը թվականը միշտ պահպանում է ը կամ ն վերջնահնչյունը՝ իննանիշ, իններ, տասնինը:

ԹՎԱԿԱՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Խոսքի մասերի, մասնավորապես բայի դիդակտիկական համակարգը կառուցելիս պետք է ելնել ուսուցման նկատմամբ մանկավարժական հիմնական պահանջներից և մատչելիության, աստիճանականության, համակարգայնության սկզբունքներից: Գոյականի, բայի գիտական տեսության մեջ նրա քերականական կատեգորիաներն ու ձևերը ներքնապես կապվում են իրար հետ և կազմում միասնական ամբողջություն:

Ըստ այդմ՝ քերականական նյութը պետք է ներկայացնել տրամաբանական հաջորդականությամբ: Օրինակ՝ թվականի ուսուցման տրվում են տվյալ խոսքի մասի հիմնական և ընդհանրական հատկանիշները՝ բայիմաստը, սեռը, խնդրառությունն ու կերպը, այնուհետև հաջորդականորեն բացահայտվում ու մեկնաբանվում են թվականի տեսակները, կիրառության առանձնահատկությունները և այլն:

Գործնական խոսքի ուսուցման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի ոչ միայն թվական խոսքի մասի բառակազմի ճանաչումը, թվականների կազմության և ուղղագրության լավ իմացությունը, այլև դրանց տեսակների, ենթատեսակների, դրանց նմանությունների ու տարբերությունների բացահայտումը: Թվականի ուսումնասիրությունն սկսվում է նրա խոսքիմասային իմաստի և ունեցած դերի պարզաբանումից: Բերվում է տեքստ՝ թվականի տարբեր տեսակների գործածությամբ, առանձնացված թվականները տեսակավորվում են, և նշվում է, թե դրանցից յուրաքանչյուրն ինչ է ցույց տալիս: Աշակերտները բերում են այլ օրինակներ ևս: Ապա եզրակացնում են, որ թվականները առարկաների թիվ, քանակ կամ հերթական կարգ ցույց տվող բառեր են: Հարկ է նկատել, որ թվական խոսքի մասը ծավալով փոքր թեմա է, բայց առ այսօր մի շարք չլուծված կամ շրջանցված հարցեր էր պարունակում: Անհրաժեշտ ենք համարում ուշադրություն հրավիրել դրանց վրա: Այսպես, օրինակ՝ կոտորակային թվականները թվարկելիս այդ շարքում հիշատակվում են թվաբանական մեծությունների անունները, բայց ոչ ինքնուրույն բառեր: 1/4 թիվը կարող է անվանվել մեկ չորրորդ կամ մեկ քառորդ, քառորդ: Նույն կերպ 1/2, 0.5 թվերը համապատասխանաբար անվանվում են մեկ երկրորդ, զրո ամբողջ հինգ տասնորդական կամ ուղղակի կես: Անհասկանալի պատճառով նախկինում թե՛ կեսը, թե՛ քառորդը չէին

հիշատակվում թվականների շարքում: Նույն պատկերն է մեկուկես, երկուսուկես և նման բառերի

դեպքում: Թվականների շարքը պետք է դասել նաև զրո դասը: Թվականը ուսուցանելիս ուսուցիչը նախ անդրադառնում է թվականի իմաստային, ձևաբանական և շարահյուսական առանձնահատկություններին: Թվականն արտահայտում է քանակ, քանակային հատկանիշ և, ի տարբերություն քանակ արտահայտողայլ բառերի (ածական, մակբայ, դերանուն), նշում է քանակայնության սահմանային գաղափար՝ իմաստ, թվարկման աճող կամ նվազող աստիճանականության որոշակի միավոր, համեմատել՝ շատ, քիչ, բազում, բոլոր, բազմիցս, կրկին, այսքան, որերորդ և մեկ, երկու, տասը, երկրորդ, երրորդ, երկուական, երեքական: Նախապես թվականը դիտարկվում էր անուն խոսքի մասի մեջ՝ չտարորոշված, ապա համարվեց անվան քանակ արտահայտող տարբերակ, այժմ այն ճանաչվում է իբրև ինքնուրույն խոսքի մաս, թեև ոմանք թվականները բաշխում են հարաբերակից խոսքի մասերի շարքում: Այնուհետև կիրառվում են հենակետային հարցեր՝ աշակերտների բառակազմական գիտելիքները ստուգելու նպատակով. 1. ի՞նչ հիմունքներով են թվականները խոսքի մասերի համակարգում առանձնացվում, 2. որո՞նք են թվականների տեսակները, 3. գրության ի՞նչ առանձնահատկություններ ունեն թվականները: Աշակերտների օգնությամբ ու ուսուցչի ուղղորդությամբ կազմվում է թվականների տեսակները ներկայացնող մի աղյուսակ: Հայտնի է, որ բաշխական թվականները մերթ դիտվում են որպես քանակական թվականների ենթատեսակ, մերթ որպես ինքնուրույն տեսակ: Քանակի գաղափարը պետք է զուգորդել թվի հասկացության հետ, և այդ ժամանակ պարզ կդառնա, որ կոտորակային և բաշխական թվականները քանակականի ենթատեսակ դիտելը ճիշտ չէ և ներկայացնում է այդ տեսակների ներկայացման անհարմարություն: Կոտորակային թվականները, ինչպես հայտնի է, բաղադրյալ կապակցություններ են՝ կազմված երկու բաղադրիչից, որոնցից առաջինը քանակական թվական է, իսկ երկրորդը՝ դասական: Այս դեպքում կոտորակային թվականի կազմության մասին խոսել, երբ դասականների մասին գաղափար չի տրված, անհնար է: Այս խնդիրը լուծելու համար թվականները ներկայացվում են չորս տեսակներով՝ քանակական, դասական, բաշխական, կոտորակային: Օրինակ՝ դիտարկենք կոտորակային թվականների ուսուցման առանձնահատկությունները: Կրտսեր դպրոցականներն իրենց առօրյա կյանքում հաճախ են հանդիպում այնպիսի դեպքերի, երբ անհրաժեշտէ լինում ամբողջը տրոհել մասերի: Նրանք խնձոր, տանձ, կոնֆետ և այլն բաժանել են երկու մասի՝ ձգտելով պահպանել այդ մասերի հավասար լինելու պայմանը: Ուսուցիչը պետք է օգտագործի աշակերտների

ունեցած գիտելիքները, ունակություններն ու կարողությունները: Ընդհանրապես այս թեման ուսուցանելիս պետք է օգտվել զննական պարագաներից: Որպես զննական

պարագաներ կարելի է օգտագործել. 1. բնական առարկաներ, իրեր, որոնք հեշտությամբ բաժանվում են մասերի՝ ձմերուկ, խնձոր, գաթա, տանձ և այլն, 2. մասերի բաժանված որոշ առարկաների մակետներ՝ գունդ, խորանարդ և այլն, 3. թղթից, ստվարաթղթից պատրաստված և մասերի բաժանված շրջան, քառակուսի, ուղղանկյուն և այլն, 4. աղյուսակներ, որոնց օգնությամբ կարելի է համեմատել մասերը, կոտորակները: Նպատակահարմար է, որ այդպիսի զննական պարագաներ ունենա յուրաքանչյուր աշակերտ: Մասի հասկացությունը ձևավորելու համար աշակերտները պետք է իրենք կարողանան ստանալ շրջանի, ուղղանկյան կես մասը, քառորդ մասը և այլն: Մեծության մասին հասկացությունը ձևավորելու նպատակով կարելի է վերցնել միևնույն մեծությամբ (միևնույն շառավիղն ունեցող) երկու շրջան, որոնցից մեկը բաժանել երկու հավասար մասի (ծալել այնպես, որ այդ մասերը համընկնեն): Պետք է ցույց տալ ամբողջ շրջանը և կես շրջանը՝ ասելով. «Սա մեկ շրջան է, իսկ սա շրջանի կեսն է, որը շրջանի մեկ երկրորդ մասն է»: Մեկնաբանվում է, որ մասերը գրվում են երկու թվերի օգնությամբ: 2–ը ցույց է տալիս, որ շրջանը բաժանված է երկու հավասար մասերի, իսկ առաջինը ցույց է տալիս, որ այդ մասերից վերցված է մեկ մասը: 2–ը գրվում է գծից ներքև, իսկ մեկը՝ գծից վերև: Նման աշխատանք կարելի է կատարել ուղղանկյան, քառակուսու պատկերների հետ: Կարելի է օգտվել նաև հատվածներից: Այդ պատկերները բաժանելով 3, 4, 5... մասերի՝ ցույց է տրվում, թե ինչպես են ստացվում մեծության 1/3, 1/4, 1/5 ... մասերը: Աշակերտներին կարելի է առաջարկել, որ իրենց ուղղանկյունը բաժանեն 3 կամ 4մասի և վերցնեն կամ ներկեն 1/3 կամ 1/4 մասը: Նույն աշխատանքը կարելի է կատարել նաև հատվածների հետ: Օգտվելով զննականությունից՝ աշակերտները պետք է կարողանան համեմատել միևնույն մեծության տարբեր մասերը: Համեմատելով միևնույն մեծության տարբեր մասերը՝ աշակերտները պետք է եզրակացնեն, որ 1/2 > 1/4, 1/4 < 1/2, 1/8 < 1/4 և այլն: Կարելի է նաև առաջարկել, որ աշակերտները ուղղանկյունը բաժանեն չորս հավասար մասի և վերցնեն այդպիսի երեք մաս: Այստեղ ևս մեկնաբանվում է, որ 4–ը ցույց է տալիս, թե ամբողջը քանի մասի է բաժանված, իսկ 3–ը ցույց է տալիս, թե այդպիսի քանի մաս է վերցված: Ուսուցիչն ասում է, որ այսպիսի գրառումներն անվանում են կոտորակ: Գծից վերև գրված թվին անվանում են կոտորակի համարիչ, իսկ գծից ներքև գրված թվին՝ կոտորակի հայտարար: Պետք է ասել, որ եթե կոտորակի համարիչը փոքր է հայտարարից, ապա այն անկանոն է: Պետք է գրել այդպիսի կոտորակներ և տալ

մեկնաբանումներ: Օգտվելով զննականությունից՝ աշակերտները պետք է կարողանան համեմատել կոտորակները և ասել, թե նրանցից որն է մեծ, որը՝ փոքր, օրինակ՝ 3/4> 1/4,

1/4 < 3/8 և այլն: Տարբեր հայտարարներ ունեցող կոտորակները համեմատելու համար նույն չափսի ուղղանկյունները (քառակուսին, հատվածը և այլն) պետք է բաժանել այնքան մասի, որքան ցույց է տալիս կոտորակի հայտարարը: Օրինակ՝ 3, 6, 9 հայտարար ունեցող կոտորակները համեմատելու համար հավասար ուղղանկյունները պետք է բաժանել 3, 6, 9 մասերի: Կոտորակային թվականների ուսուցման ընթացքում ուսուցման զննական ու համագործակցային մեթոդները հիմնավորում են ուսուցչի գործունեությունը, որն ուղղված է աշակերտների կողմից գիտելիքների ձեռքբերման գործընթացի կազմակերպմանը: Նույն հիմունքներով հնարավոր է կազմակերպել թվականների մյուս տեսակների ուսուցումը: Նպատակահարմար է թվականների ուսուցման գործընթացը կազմակերպել համագործակցային մեթոդով՝ դասարանի աշակերտներին բաժանելով չորս խմբի: Խմբերից յուրաքանչյուրին ուսուցիչը հանձնարարում է ուսումնասիրել թվականի առանձին տեսակ: Աշխատանքի ընթացքում բոլոր խմբերն օգտվում են դասագրքի՝ իրենց հանձնարարված նյութի համապատասխան բաժնից: Անհրաժեշտության դեպքում ուսուցիչը նյութեր է տրամադրում: Աշակերտներին հանձնարարվում է համապատասխան բնագրերից դուրս բերել թվականների տեսակները, կատարել առաջադրանքներ, որոնք վերաբերում են թվականների կիրառություններին: Աշխատանքների ավարտից հետո քննարկումների միջոցով անդրադարձ է կատարվում նշված հանձնարարություններին և ամփոփվում են աշակերտների՝ թվականի վերաբերյալ գիտելիքները: Կարող են տրվել նաև այսպիսի առաջադրանքներ: Առաջադրանք 1. Ներկայացված է երիցուկի պատկեր, որի վարսանդին «հազար» թվականն է: Առաջարկվում է ծաղկի թերթերին գրել այդ արմատով ձևավորված այլ բառեր՝ նշելով դրանց խոսքիմասային պատկանելությունը (հազարագանձ, հազարաբույր, հազարաթույր, հազարապետ, հազարաթերթ, հազարամյա, հազարամյակ և այլն): Առաջադրանք 2. Քանի՞ ձևով կարելի է անվանել հետևյալ թվերը. 0.5, 1/2, 0.25, 1/4: Առաջադրանք 3. Ի՞նչ տարբերություն կա պարզ թվականների և դրանց կրկնավոր ձևերի միջև: Դրանք գործածել նախադասությունների մեջ: Առաջադրանք 4. Հետևյալ շարքից թվականներն առանձնացնել այլ խոսքի մասերից և որոշել վերջիններիս տեսակը. շատ, քիչ, չորս, քառորդ, երեք, քանի, երեքանոց, երեքական, եռամսյա, եռամսյակ, հարյուր, հարյուրյակ, այսքան: Առաջադրանք 5. Թվական դերանունները փոխարինել թվականներով, որոշել դրանց տեսակը, կազմությունը: Հիվանդը մի քանի րոպե արձանացած մնաց, ապա սթափվեց: Եղնիկները

որքան ճանապարհ էին անցել՝ հայտնի չէր: Աշակերտների ուշադրությունը պետք է բևեռել նաև թվականների գրության առանձնահատկությունների վրա: Դասական

թվականներն իրենց իմաստով ու ձևով բավական հատուկ և որոշակի ենթակարգ են կազմում: Այստեղ կարևոր է նրանց կազմության և դրա հետ կապված ուղղագրության, ինչպես նաև համառոտագրության ձևերի ուսուցումը: Անջատ գրվող թվականների բաղադրիչները սովորաբար կցվում են, երբ նրանց որևէ վերջածանց է ավելանում (հինգհարյուրանոց, երեքհարյուրական): Պետք է ուշադրություն հրավիրել նաև հետևյալի վրա, որ 1–ից մինչև 8 թվականը վերջում չունեն ը կամ ն: Ը–ն գրվում է միայն ինը և տասը բառերի վրա: Սխալ է ութանասուն, ճիշտ է ութսուն: Երրորդ, չորրորդ թվականները գրվում են կրկնակի ր–ով, որովհետև կազմվել են եր, չոր արմատներից և որդ ածանցից: Պետք է տարբերել թվական բառերը (հինգ, հիսունինը) և թվային իմաստ ունեցող կապակցությունները (երկու հարյուր քսանհինգ): Թվական խոսքի մասը հիմնավորապես պետք է սովորել ճանաչողական ու կիրառական վարժությունների, խմբային կամ զույգերով աշխատանքի միջոցով: Բազմաթիվ նպատակային վարժություններ կան դասագրքում և աշխատանքային տետրերում: Ուղղագրական հմտությունների ձևավորելուց հետո ամբողջ թեմայից յուրացման մակարդակը ստուգելու համար կարելի է կազմել հարցարաններ՝ աշխատանքային տետրերի, դասագրքի կամ ուսուցչի կազմած առաջադրանքներով:

ՕՐՎԱ ԴԱՍԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՆՄՈՒՇ-ՕՐԻՆԱԿ

Դասարան	VII
Առարկա	Հայոց լեզու
Դասի թեմա	«Թվականը որպես խոսքի մաս»
Օգտագործվող նյութեր	Դասագիրք, հարցերի քարտարան, նշագրիչներ, թղթապաստառ
Դասի նպատակ	Իմանալ՝ • թվականի արտահայտած ընդհանուր իմաստը, ձևաբանական առանձնահատկությունը Կարողանալ՝ • տարբերել թվականը այլ խոսքի մասերից • որոշել թվականի շարահյուսական պաշտոնը նախադասության մեջ • տեքստից դուրս գրել թվականները, գործածել գրավոր խոսքում Ձևավորել՝ • թվականի տեսակները խոսքում ճիշտ կիրառելու կարողությունները Նպաստել՝ • փաստարկված խոսք կազմելու մեջ թվականների արժեվորմանը
Վերջնարդյունքները	Բացատրել խոսքում թվականին դիմելու անհրաժեշտությունը: Տարբերակել ***թիվ, թվային կարգ, քանակ, թվանշան*** հասկացությունները: Տարբերել թվականների տեսակները: Անսխալ գրի և արտասանի թվականները: Տարբերակի թիվ, թվային կարգ, քանակ, թվանշան հասկացությունները: Գնահատել և հիմնավորել թվերի կիրառության հաճախականությունը տարբեր ոճերում: Կառուցել խոսք, ստեղծել իրավիճակներ՝ թվականի տարբեր տեսակների կիրառությամբ:

Ուսումնական մեթոդներ **Դասի ընթացք**	«Կարճ դասախոսություն», «Բազմանիստ» «Տ-աձև աղյուսակ» **Խթանում**- «Բազմանիստ՝ «թվական» մեկնաբառով»: **Իմաստի ընկալում**-«Կարճ դասախոսություն»՝ թվականի խոսքի մասային նշանակությունը, համապատասխան վարժությունների կատարում, մտքերի փոխանակում, քննարկում: **Կշռադատում**- «Հարցերի քարտարան»-խմբային աշխատանք: Խմբերի աշխատանքները ստուգվում են, սխալները շտկվում են, ամփոփվում, գնահատվում:
Կապը ՀՊՉ-ի հետ	Հ1, Հ2, Հ25, Հ26, Հ28, Հ31, Հ32, Հ33, Հ34, Հ35, Հ45
Տնային աշխատանք	Դասագրքի համապատասխան վարժություններ
Անդրադարձ	Ամփոփիչ հարցեր:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, յուրաքանչյուր առարկա ունի դասավանդման մեթոդիկայի իր առանձնահատկությունները, որոնք պայմանավորված են այդ առարկայի իմացական, ճանաչողական, բովանդակային բնույթով: Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկան առանձնանում է առավել պահպանողական բնույթով, քանի որ կա թեմաների դասավանդման հստակ հաջորդականություն: Թվականի ուսուցումը, ըստ իս, կազմակերպել նպատակահարմար է խմբային՝ համագործակցային ու զննական մեթոդներով: Խմբային ուսուցման ժամանակ կիրառվող մեթոդները աշակերտներին միմյանց հետ հաղորդակցվելու հնարավորություն են տալիս: Սովորողները համատեղ քննարկում են ուսուցման տվյալ թեմայի հետ կապված բազմաթիվ հարցեր, հայտնվում են բանավիճային իրադրություններում, արտահայտում են իրենց կարծիքները: Շատ կարևոր է հաշվի առնել սովորողի տարիքային առանձնահատկությունները. դասաժամին տալ բացահայտվելու հնարավորության, մարդկային ազատ շփումների տիրապետելուն, ճշմարտությունն ինքնուրույն բացահայտելու հնարավորուտյուն, փակուղիներից ելքեր որոնելուն, սոցիալական հմտություններ ձեռք բերելուն և այս ամենի արդյունքում ինքնուրույն և համարձակ քաղաքացիներ ձևավորելուն, ովքեր չեն վախենում որոշումներ կայացնելուց, սեփական կարծիքը բարձրաձայն հայտնելուց:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աշոտ Տեր–Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա, 1980:
2. Արարատ Ղարիբյան, Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, 1954:
3. Գարի Վ. և ուրիշներ, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ. Մասնագիտական կրթություն և մասնագիտական զարգացում: Ձեռնարկ մանկավարժների և կրթության կազմակերպիչների համար, Եր., 2005:
4. Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Եր., 2009:
5. Հարությունյան Ռ., Հայոց լեզվի մեթոդական ցուցումներ, Եր., 2015:
6. Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Ձևաբանություն, Եր., 2002:
7. Յու. Ավետիսյան, Հ Ջաքարյան, Ձևաբանություն:
8. Գ. Մկրտչյան, Թ. Թովմասյան, Մեթոդական ձեռնարկ ուսուցիչների համար: